ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Կան մարդիկ, որոնք հպարտությամբ են նշում իրենց այս կամ այն ծանոթի հետ ունեցած վաղեմի բարեկամությունը։ Բարեկամ լինել, բարեկամ ունենալ։ Հրաշալի՜ է։ Այդ նշանակում է կիսել քեզ հուզող մտքերը, խոսել ու լսել, թե ինչ խորհուրդ կտա քեզ քո բարեկամը, օգնել ու օրհնություն ստանալ նրանից։

... Ես էլ ունեմ իմ բարեկամները։ Ես նրանց հանդիպում եմ 15 տարեկանից, և ահա մենք 18 տարվա բարեկամներ ենք։

Ս. Մ. Կիրովի անվան զորժարանի բազմաթիվ ցեխերից մեկն անվանվում է 30-ա՝ վերջնական մշակման ցեխ։ Այն առաջնական, ճկուն նյութը, որ վերջնական մշակումից հետո կոչվում է կաուչուկ և լայնորեն օգտագործվում է ժողովրդական տնտեսության բազմաթիվ ճյուղերում՝ պատրաստվում է այստեղ։ Այն ստեղծում են ի՛մ բարեկամները. մարդիկ և... մեքենաները։ Կաուչուկի սկզբնական անվանումը լատեքս է։ Այն հարյուրավոր փորձարկումները, որին ենթարկվել է նա, ցույց են տալիս մեր մարդկանց համառ կամքն ու հաղթելու մեծ ցանկությունը։ Մի ամբողջ տարի անհամար թվով և բազմազան փորձերից հետո միայն համոզվեցինք, որ արտադրանք թողարկելը հնարավոր է։

Հակայական ագրեգատի միջոցով կաթնեման թանձր հեղուկը մշակվում էր ատոր չրի հոսքի տակ։ Արտադրանքն անորակ էր և կպչուն։ Երկար որոնումներ... անքուն գիշերներ... Մնվեց մշակման նոր տարբերակ։ Լատեքսի հետագա մշակումը կատարվեց 90 աստիճանի ջերմությամբ չրի հոսանքի տակ։ Ագրեգատի դանդաղ աշխատանքը փոխարինվեց համեմատաբար ավելի արագով։ Լավ էր, բայց այն չէր։ Մշակման ժամանակ հեղուկ լատեքսի մի մասը կորչում էր։ Ընկերներիս հետ նորից սկսեցինք լաբորատորիաներում գիշերներ լուսացնել։ փորձ... նորից փորձ... Գործին օգնության հասան կենտրոնախույս պսակները։ Նրանք քամվող շիճուկը նորից վերամշակեցին։ Նոր բացրինք լուծույթները և նստվածքը վերացավ։

Գուցե ես պատմում եմ ոչ այնքան պարզ, բայց այլ կերպ հնարավոր չէ։ Հարկավոր է լինել տեղում, սեփական աչքերով տեսնել այս բոլորը։ Երկարատև փորձերի ընթացքում եղան թերահավատներ, եղան տատանվողներ, բայց հետազոտական աշխատանքն իր արդյունքները տվեց։

... Մշակման ատոմիստական պրոցեսը՝ երբ լատեքսը ատոմիստաբար խաշորանում է, կաթնագույն հեղուկը ցանցավոր ապարատների (մի խումբ բանվորների ռացիոնալիզատորական առաջարկ) միջով անցնելով դառնում է հատիկավոր հեղուկ, վերջապես վեր է ածվում սպիտակ ժապավենի և չորացվելուց հետո՝ առաձգական լատեքսի։

Բոլորովին վերջերս այս ամենը այլ կերպ էր կատարվում.

Հումքը ատացվում էր շատ պրիմիտիվ ձևով, որն ազդում էր բանվորների առողջության վրա։

Այժմ բոլոր պրոցեսները կատարվում են փակ ապարատների մեջ, այլ մեքենաներով, և այդ հումքն ավելի օգտագործելի է ու ավելի նման բնական կաուչուկին։

Կարող է զարմանալի թվալ, որ անշուշտ մեքենան մարդու լավագույն բարեկամն է դառնում։ Այո՛։ 18 տարվա բարեկամության վաղեմությունը ինձ ես թույլ է տալիս շարանցի ավագ ապարատավար Հմայակ Վարդանյանի, ժապավենաթող մեքենայի ավագ ապարատավար Աշոտ Մխիթարյանի, երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող Պետրոս Հովհաննեսյանի նման իրենց օգտությունը երբե՛ք չզլացող մարդ-բարեկամների կողքին հպարտությամբ նշելու իմ՝ մեքենա-բարեկամներին...

ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս. Մ. Կիրովի անվան զորժարանի վարպետ

* * *

Անգլիացի ֆիզիկոս Թոմաս Յունգը աչքի էր ընկնում զարմանալի բազմակողմանիությամբ։ Երկու տարեկան հասակում նա սովորել է կարդալ, վեց տարեկանում բավական լավ ծանոթ է եղել երկրաչափությանը, իսկ ութ տարեկանում ինքնուրույն կարողացել է գեոդեզիական չափումներ կատարել։

Իր կյանքի՝ ինձից մինչև տասնչորս տարեկան հասակը նա ծանոթանում է հունական և հռոմեական լեզուներին, տիրապետում է ֆրանսերենին, իտալերենին, հին հրեերենին, պարսկերենին և արաբերենին։ Զբաղվելով բուսաբանությամբ, տասնհինգամյա Թոմասը վճռում է իր ձեռքով պատրաստել մանրադիտակ։ Դրա համար նա ստիպված է լինում վարպետանալու խառատի և հղկողի մասնագիտության մեջ։ Միաժամանակ նա գրում է գիտական շարադրություն՝ հունական փիլիսոփայության մասին։

Քսան տարեկանում Յունգը հրապարակում է հոդված՝ լուսավորվածության տարբեր պայմաններին և ցայտունության տարբեր հեռավորություններին աչքի ակոմոդացիայի (հարմարվելու) մասին. քսաներկու տարեկան նա ավարտում է բժշկական ֆակուլտետը։ Նա քսանյոթ տարեկան էր, երբ դարձավ պրոֆեսոր և հայտնագործեց ինտերֆերենցի երևույթը. միաժամանակ լույս է տեսնում նրա աշխատությունը՝ եգիպտական հիերոգլիֆների վերծանման մասին։

Յունգը համոզված էր, որ ցանկության դեպքում մարդ կարող է սովորել ամեն ինչ։ Նա յուրացրեց իրեն հայտնի բոլոր երաժշտական գործիքները. նա գեղանկարչությունն այնպես էր հասկանում, որ համարվում էր իր ժամանակի խոշորագույն էքսպերտներից մեկը՝ հին վարպետների նկարների գծով։ Նա զբաղվում էր օպտիկայով, ակուստիկայով, թերմոդինամիկայով, տեխնոլոգիայով, նավաշինությամբ, աստղագիտությամբ, դեռֆիզիկայով, ֆիզիոլոգիայով, բժշկությամբ, կենդանաբանությամբ և լեզվաբանությամբ։ Յունգի նվաճումների զարգացակետը նրա ելույթներն էին կրկնում։ Նա ձիախաղացությունն վարպետ էր, հիանալի ձեռնածու և անգերազանցելի լարախաղաց։ Նրա ելույթները միշտ գրավում էին բազմաթիվ հանդիսականների ուշադրությունը։

digitised by A.R.A.R.@